ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 մարտի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

45
(2711)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԱՅՔԱՐ ՕՄԲՈՒԴՄԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ

Երկարատեւ փնտրտուքներից հետո ԱԺ խմբակցությունները վերջապես ՄԻՊ թեկնածուներ են գտել: Իշխող ՔՊ խմբակցությունը ՄԻՊ թեկնածու է առաջադրել գլխավոր դատախազի տեղակալ Անահիտ Մանասյանին, իսկ ընդդիմադիր «Պատիվ ունեմ» եւ «Հայաստան» խմբակցություններն էլ ՄԻՊ թափուր պաշտոնում առաջադրել են ՍԴ աշխատակազմի նախկին ղեկավար Էդգար Ղազարյանի թեկնածությունը: Փաստացի այս պահին ՄԻՊ թեկնածուները երկուսն են: Ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց եւ առնվազն մեկ թեկնածու առաջադրվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու մասին հարցը քննարկվում է իրավասու մշտական հանձնաժողովի, այս դեպքում՝ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի առաջիկա հերթական նիստում կամ կարող է քննարկվել հանձնաժողովի արտահերթ նիստում: Ազգային ժողովին ՄԻՊ թեկնածու է առաջադրվում ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի որոշմամբ՝ խմբակցությունների առաջադրած մեկական թեկնածուների թվից, այսինքն՝ գլխադասային հանձնաժողովի անդամներն իրենց քվեարկությամբ պետք է ընտրեն առաջադրված թեկնածուներից մեկին եւ նրան առաջադրեն ԱԺ-ին: ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի անդամները 7-ն են, մեծամասնություն են կազմում ՔՊ խմբակցության պատգամավորները՝4/3 հարաբերակցությամբ: Հարցի քննարկման ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում, իրավասու մշտական հանձնաժողովի նախագահն Ազգային ժողովի նախագահին է ուղարկում հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքը եւ հայտնում որոշման մասին: Ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ եթե սահմանված ժամկետում Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին թեկնածու չի առաջադրվում, ապա դրանից հետո՝ տասնօրյա ժամկետում, համապատասխան պաշտոնում կարող են առաջադրվել թեկնածուներ: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանից հետաքրքվեց՝ ինչպես են տրամադրված Էդգար Ղազարյանի հարցում, հնարավոր է արդյոք, որ, ամեն դեպքում, այս անգամ զիջումների գնան եւ ընտրեն ընդդիմության թեկնածուին: «Առանց մեկնաբանության»,- կարճ արձագանքեց պատգամավորը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ականների համար իսկական պատուհաս է դարձել Հռոմի ստատուտին միանալու վերաբերյալ ՍԴ որոշումը: Ինչպես հայտնի է, ՀՀ սահմանադրական դատարանը մարտի 24-ին որոշեց, որ Հայաստանի միացումը միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությանը համապատասխանում է երկրի հիմնական օրենքին: Խնդիրը հետեւյալն է. Հռոմի ստատուտի կարգավորումների համաձայն՝ միջազգային քրեական դատարանով քրեական պատասխանատվության ենթարկված անձանց նկատմամբ չի կարող կիրառվել համաներում կամ ներում, իսկ Հաագայի դատարանի կողմից մարտի 17-ին ՌԴ նախագահին ձերբակալելու օրդեր էր իջեցվել: Ստացվում է՝ Հռոմի ստատուտին միանալով՝ ՀՀ-ն պարտավորվում է կատարել նաեւ Հաագայի դատարանի այս որոշումը: ՍԴ-ում փաստաթղթի սահմանադրականությունը որոշելուց հետո Հռոմի կանոնադրությունը կամ ստատուտը դեռ պետք է վավերացվի ԱԺ-ում: Ասել է թե՝ գնդակը խորհրդարանականների դաշտում է: Բանն այն է, որ ՔՊ-ականները հիմա վախեցած են ՍԴ այս որոշումից, տարբերակներ են մտածում՝ ինչպես մանեւրեն սրանից, հատկապես որ Մոսկվան բավականին կոշտ է արձագանքել սրան եւ զգուշացրել «երկկողմ հարաբերությունների համար սրա չափազանց բացասական հետեւանքների մասին»: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ խմբակցության պատգամավոր Վիգեն Խաչատրյանից (ով նաեւ ԱԺ պետահրավական հանձնաժողովի անդամ է) հետաքրքրվեց՝ ՔՊ-ն ինչ դիրքորոշում ունի՝ սրա հետ կապված, արդյոք կբերեն այն ԱԺ: «Դեռ նոր է ՍԴ-ի որոշումը, քննարկում չի եղել այդ մասով, բայց կարծում եմ՝ առաջիկայում կքննարկենք դա»,- ասաց պատգամավորը: Հիշեցնենք, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, լրագրողների հետ զրույցում անդրադառնալով հարցին՝ եթե Հռոմի ստատուտը վավերացվի, ու ՌԴ նախագահը գա ՀՀ, մեր քաղաքական ղեկավարությունը ինչ գործողություն կանի արդյոք, պատասխանել էր. «Թող հլը վավերացնի. Կիկոսի մահին չեմ անդրադառնա, իրագործումը չեմ պատկերացնում: Դա շատ ավելի քաղաքական, միգուցե պատմական գնահատական է»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի եւ ՊՆ նախկին պաշտոնյաների քրեական գործով դատարան է կանչվելու ՀՀ պաշտպանության նախկին փոխնախարար Ալիկ Միրզաբեկյանը: Նշենք, որ նա 2016 թվականին, Սերժ Սարգսյանի հրամանով, ազատվել էր ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի պաշտոնից: Ըստ լուրերի՝ Միրզաբեկյանը, չգիտես՝ ինչու, սպառազինության եւ սննդամթերքի մատակարարման գնումները շուկայականից բարձր գներով է իրականացրել: Նշենք, որ երեկ Հակակոռուպցիոն դատարանում ընթանում էր պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի եւ ՊՆ նախկին պաշտոնյաների գործով դատական նիստը: Դատարան էին հրավիրվել վկաներ, որոնցից մեկը «Հայաստան» խմբակցության ղեկավար, պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանն էր: Ինչպես հայտնի է, ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել էր քրեական գործ՝ ռազմամթերքի ձեռք բերման գործընթացում ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ: Քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել յոթ անձի, այդ թվում՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ՋՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանին, ՋՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, Պատրոն Դավո մականունով հայտնի, զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանին:

Արցախում հնարավոր ներքաղաքական գործընթացները կանգ կառնեն: Բանն այն է, որ մարտի 23-ին Արցախի Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց Սահմանադրության փոփոխության նախագիծը: Այն վերաբերում էր ռազմական դրության ժամանակ հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում խորհրդարանի կողմից երկրի նախագահի ընտրության եւ դրա առանձնահատկությունների վերաբերյալ հարցերին: Այժմ՝ խորհրդարանի կողմից այն ընդունելուց հետո, նախագիծն արդեն ուղարկվել է Արցախի գերագույն դատարան: Հենց այս կառույցը պետք է որոշի, թե որքանով է այս փոփոխությունը համապատասխանում Արցախի Սահմանադրությանը: Օրենքը սահմանում է, որ Արցախի գերագույն դատարանը կարող է այս հարցը քննել եւ որոշում կայացնել 10 օրից մինչեւ վեց ամիս ժամկետում: Սա նշանակում է, որ առաջիկայում, մինչեւ դատարանը որոշում կկայացնի, Արցախի նախագահի փոփոխություն չի լինի: Հնարավոր է, որ Արցախի գերագույն դատարանը հարցը նաեւ արագ քննի, ու որոշում կայացվի, սակայն, ամեն դեպքում, մինչ այդ որոշումը ներքաղաքական իրադարձություններ Արցախում տեղի ունենալ չեն կարող:

ԱՐՁԱԳԱՆՔ ՉԿԱ

ԱՐՑԱԽԸ ՓՈՐՁԱԴԱՇՏ ՉԷ

Արցախում իրավիճակը վերջին օրերին կտրուկ սրվել է: Հակառակորդը ղարբեռաբար դիրքային առաջխաղացման փորձեր է անում Արցախում, կրակում է քաղաքացիական անձանց ուղղությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախում ստեղծված իրավիճակի վերաբերյալ զրուցել է Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանի հետ:

-Պարոն Բաբայան, ի՞նչ իրավիճակ է Արցախում, ինչո՞վ եք պայմանավորում հակառակորդի ակտիվացումը վերջին օրերին:

-Այս ամենի պատճառն Ադրբեջանի ատելությունն է Հայաստանի ու Արցախի նկատմամբ, հակառակորդի նպատակն է Արցախը կլանել, ինչպես նաեւ Հայաստանի համար որեւէ շանս չթողնել գոյության համար: Այս նպատակի համար Ադրբեջանը գնում է ցանկացածի քայլի՝ մարդ են սպանում, հոգեբանական ճնշում են գործադրում, ինչ ուզում, անում են: Սրան նպաստում է նաեւ այն, որ միջազգային հանրությունն է անտարբեր, միասնական կարծիք չկա, սրանից օգտվում է Ադրբեջանը եւ շարունակում է իր ցեղասպան քաղաքականությունը:

-Ադրբեջանը դիրքային առաջխաղացման փորձեր է նաեւ արել այդտեղ: Ո՞ր հատվածներում է հակառակորդին հաջողվել առաջ գալ, ռազմավարական ի՞նչ նշանակություն ունեն այդ տարածքներն Արցախի համար:

-Շուշիի շրջանում են առաջխաղացման փորձերը լինում: Ադրբեջանը փորձում է սեղմել Արցախի շուրջ օղակը, փորձում է կտրել Շուշիի շրջանի գյուղերը Արցախից: Այսինքն՝ բոլոր քայլերը ձեռնարկում է, որպեսզի վատություն անի Արցախին, մեծ հարված հասցնի: Մյուս կողմից էլ՝ այս ամենն անսպասելի չէր, քանի որ Ադրբեջանը չի թաքցնում իր նկրտումները

-Պարոն Բաբայան, իսկ ռուս խաղաղապահներն ի՞նչ քայլեր են ձեռնարկում Ադրբեջանի սադրանքները կանխելու համար:

-Ռուս խաղաղապահները որոշ քայլեր ձեռնարկում են, հիմա դիրքավորվել են այնտեղ, որտեղ ադրբեջանցիները հաստատվել են, որպեսզի թույլ չտան նրանց հետագա առաջխաղացումը, բայց այստեղ իր ազդեցությունն է ունենում նաեւ այն, որ սահմանափակ է ռուս խաղաղապահ առաքելության թվաքանակը, ընդամենը՝ 1980 հոգի, ինչը շատ քիչ է. սրա մասին բազմիցս ասել ենք: Խաղաղապահներին պետք է նաեւ մանդատ տրվի, որպեսզի կարողանան ուժ գործադրել, այսինքն՝ պետք է լինեն ոչ միայն խաղաղությունը պահպանող, այլեւ խաղաղություն պարտադրող կողմ. միայն այս դեպքում նման միջադեպերի քանակը կնվազի:

-Վերջին սրացումներից հետո Արցախի ղեկավարությունը դիմե՞լ է միջազգային կառույցներին, ի՞նչ արձագանք կա նրանց կողմից:

-Միջազգային կառույցներին այնքա՛ն ենք դիմել. ես չեմ ուզում մեզ ծաղրեն, հասկացանք, որ դա ձեւական, ֆորմալ արարողակարգ է, որը պետք է պահպանել, խաղի կանոն է, որը պետք է պահել, բայց պետք է նաեւ հասկանալ, որ արդյունք չկա: Տեսե՛ք, քանի երկիր է շնորհավորել Ալիեւին՝ Նովրուզի կապակցությամբ, ադրբեջանցի էկոակտիվիստներից մեկն ասում է՝ պետք է կտրենք հայերի կոկորդն ու արյան մեջ թաթախենք, որ Նովրուզ տոնենք, իսկ տարբեր երկրներ, որոնք պատեհ ու ոչ պատեհ առիթներով գոռում, ճվում են ժողովրդավարության մասին, Ալիեւի Նովրուզն են շնորհավորում, մի մարդու, որն այս բոլոր գործողությունների եւ նման մարդկանց մեջքին է կանգնած: Միջազգային դատարանը կիսատ-պռատ որոշում է կայացրել, բայց չեն կարողանում ազդել կամ պարտադրել Ադրբեջանին: Հիմա մարդիկ սպեկուլյացիաների են ենթարկում, ասում են՝ փոխե՛ք ռուս խաղաղապահներին. եթե դատարանը չի կարողանում պարտադրել, ռուս խաղաղապահներն ի՞նչ անեն: Արցախը փորձադաշտ չէ. օրհասական վիճակ է այստեղ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՉԵՆ ՏՐՎԻ

Արդարադատության նախարարությունն առաջարկում է փոփոխություններ կատարել «ՀՀ պետական պարգեւների ու պատվավոր կոչումների մասին» օրենքում եւ հարակից օրենքներում: Մասնավորաբար, նախատեսվում է օրենքից հանել պատվավոր կոչումները եւ դրանց շնորհման կարգը:

Հիմնավորման մեջ նշվում է, որ «ՀՀ պետական պարգեւների ու պատվավոր կոչումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվավոր կոչումները սահմանվում են գիտության, կրթության, արվեստի, մշակույթի, առողջապահության, տնտեսության, ճարտարապետության, շինարարության, իրավագիտության, լրագրության, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառների զարգացման գործում ունեցած ակնառու հաջողությունների եւ բացառիկ վաստակի համար: Նախարարությունը կարծիք է հայտնել, որ, չնայած այն հանգամանքին, որ օրենքով պատվավոր կոչումների նախատեսման նպատակն ի սկզբանե եղել է առանձին ոլորտում առանձնակի հաջողություններ եւ ներդրում ունեցած անձանց խրախուսելը, պատվավոր կոչումներն իրավակիրառ պրակտիկայում չեն ապահովում հետապնդած նպատակների իրականացումը:

Ավելին, պատվավոր կոչումների շնորհումը հաճախ, դրական հետեւանքներ ունենալու փոխարեն, բացասական ազդեցություն է ունենում առանձին մասնագիտական հանրույթի ներսում առաջացող հարաբերությունների եւ առանձին մասնագիտությունների եւ կոլեկտիվների համարժեք հանրային ընկալման ձեւավորման վրա:

Նաեւ նշվում է, թե, օրինակ, մշակույթի եւ արվեստի ոլորտում նախատեսված պատվավոր կոչումների չեղարկման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ որեւէ արվեստագետի կամ մշակութային գործչի ժողովրդական լինելը չի կարող գնահատվել կամ որոշվել այս կամ այն փորձագիտական խմբի հայեցողությամբ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԳՆ-Ի ԳՆՈՒՄՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը Արտյոմ Կոջտոյանից արծաթյա կլկլան է գնել, որի արժեքը 442 հազար դրամ է եղել: Այն ներկայացվել է որպես ներկայացուցչական ծախս, սակայն, ամեն դեպքում, մանրամասներ ներկայացված չեն, թե, օրինակ, ում նվիրելու համար է արտաքին գերատեսչության կառույցը նման գնում կատարել եւ այն էլ՝ մեկ գնման ընթացակարգով:

Մեկ այլ պայմանագրով ՀՀ ԱԳՆ-ն 400 հազար է տրամադրել: Այդ գումարով նախարարությունը երկու թարգմանիչ է վարձել հայերեն-ֆրանսերեն թարգմանություն իրականացնելու համար, այսինքն՝ յուրաքանչյուր թարգմանչի տրվել է 200 հազարական դրամ:

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանի հավատարմագրերի հանձնման արարողությունը իրականացնելու համար տրամադրվել է 33 հազար տրանսպորտի ծառայությունների համար, իսկ 13 հազար դրամ էլ ծախսվել է մեկ այլ անգամ՝ մարտի 14-ին, նույն ծառայությունների համար, իսկ մարտի 15-18-ին՝ եւս 48 հազար դրամ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՈՐՔԱՆ ԿՈՐՈՒՍՏ Է ԿՐԵԼ

«Մենք ենք մեր սարերը» գործակալությունը զեկույց է ներկայացրել շրջափակման հետեւանքով Արցախի տնտեսության կորուստների վերաբերյալ:

Արցախի բյուջեի մուտքերի մոտ 73%-ը հետպատերազմյան ժամանակաշրջանում Հայաստանից տրամադրվող բյուջետային վարկն է, մնացած 27%-ը հարկային եկամուտներն են, որոնցից 7 տոկոսային կետը՝ հանքարդյունաբերության ոլորտի վճարած հարկերն են:

Ինչ վերաբերում է ծախսերի մակարդակին եւ դրանց կառուցվածքին, ապա Արցախի բյուջեի ծախսային կառուցվածքը հիմնականում սոցիալական բնույթ ունի, եւ դա պայմանավորված է նաեւ օբյեկտիվ պատճառներով, քանզի, հետպատերազմյան շրջանում շուրջ 30,000 անտուն մնացած արցախցիների խնդրի համատեքստում, ակնհայտ պետք է մեծանար բյուջետային ծախսերում սոցիալական բնույթի ծախսերի մասնաբաժինը: Վերջինս Արցախի տնտեսական տարածքների կորստի հետեւանքով բյուջետային եկամուտների էական նվազման եւ սոցիալական ծախսերի պահանջի մեծացման ֆոնին էլ ավելի է մեծացնում բյուջետային լարվածությունը:

Մասնավորապես, կախված նրանից, թե սոցիալական քաղաքականության ինչպիսի թիրախ կընտրվի (նվազագույն կենսապայմանների, թե նորմալ կենսապայմանների ապահովում), Արցախի կորուստները գնահատվում են օրական առնվազն 651-752 մլն դրամ (1.65-1.9 մլն ԱՄՆ դոլար): Ընդ որում՝ որքան երկար տեւի շրջափակումը, այնքան նշյալ ցուցանիշները դառնալու են ավելի օպտիմիստական գնահատականներ, քանի որ յուրաքանչյուր ավել օր շրջափակումը լրացուցիչ վնասում է Արցախի տնտեսական պոտենցիալին՝ հետեւապես եւ նշյալ գնահատված ծախսերին, եւ դրանց մուլտիպլիկատիվ էֆեկտներին ավելանում է ՀՆԱ պոտենցիալի վերականգման ծախսեր:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը մարտի 21-ին «Թվիթեր»-ում հրապարակում էր արել եւ շնորհավորել իրանցիների նոր տարին՝ Նովրուզը: Ուշագրավ է, որ նա դա արել էր Բաքվում արված լուսանկարով:

Այս հրապարակումից հետո նա բուռն քննադատության եւ ծաղրանքի էր ենթարկվել թե՛ Ադրբեջանում, թե՛ Իրանում, սակայն հետաքրքիր է, որ նա արդեն ջնջել է իր այդ հրապարակումը:

Հերթական անգամ նախագահի քայլը ծաղրի առարկա է դարձրել Հայաստանին միջազգային ասպարեզում:



ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԸ՝ ՍՈՉԻՈՒՄ

ՔՊ խմբակցության պատգամավորներ Վահե Ղալումյանը, Ալեքսեյ Սանդիկովը եւ Մաթեւոս Ասատրյանը մարտի 30-ից ապրիլի 5-ը կգործուղվեն Սոչի: ՔՊ-ականները Սոչիում կմասնակցեն «Հայաստանի օրերը՝ Ռուսաստանի մարզերում» խորագրով միջոցառմանը: Գործուղման հետ կապված բոլոր ծախսերի վճարումը կատարելու է հրավիրող կողմը:

ՄԻՊ ԹԵԿՆԱԾՈՒ

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՄԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՐԵԼ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը հայտնում է. «Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 8-րդ մասով՝ հայտարարում եմ՝

Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» եւ «Հայաստան» խմբակցությունները համատեղ նիստում որոշել են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի թափուր պաշտոնում առաջադրել Էդգար Ֆերդինանդի Ղազարյանի թեկնածությունը՝ նկատի ունենալով, որ մի շարք հասարակական նախաձեռնություններ եւ իրավապաշտպաններ երկրում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա վիճակը գնահատել են խիստ մտահոգիչ, իսկ լուծման ուղղությամբ գործող իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականությունը՝ ձեւախեղված: Նրանք Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի թափուր պաշտոնում «Պատիվ ունեմ» եւ «Հայաստան» խմբակցություններին առաջարկել են Էդգար Ֆերդինանդի Ղազարյանի թեկնածությունը՝ կարեւորելով հասարակական եւ մասնագիտական նախաձեռնությունների հետ համագործակցության շրջանակներում խորհրդարանական ընդդիմության համախորհուրդ գործելակերպը, խրախուսելի համարելով նման կարեւորության հարցերում թեկնածուների ինքնառաջադրման եւ պատրաստակամության կամահայտնությունը, հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 145-րդ հոդվածը, Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների համատեղ քննարկումների ընթացքում ձեռք բերված համաձայնությունները:

Այսպիսով, այս պահի դրությամբ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը պաշտոնապես ստացել է մեկ թեկնածուի առաջադրման վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, որոնք առնչվում են բացառապես Էդգար Ղազարյանին:

Անահիտ Մանասյանի վերաբերյալ քաղաքական հայտարարությունները դեռ իրավական որեւէ գործողության չեն վերածվել, եւ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը մինչ այս պահը ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովին որեւէ թեկնածու չի առաջադրել»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՈՂՄ Է → ՔՎԵԱՐԿԵԼ 415 ՄԱՐԴ

ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը միաձայն աջակցել է օրինագծին, որը ԱՄՆ պետքարտուղարին կարգադրում է աշխատել՝ Չինաստանին միջազգային կազմակերպությունների շրջանակներում զարգացող երկրի կարգավիճակից զրկելու ուղղությամբ:

Ըստ հրապարակման՝ «ՉԺՀ-ն զարգացող երկիր չէ» ակտին կողմ է քվեարկել 415 մարդ (PRC Is Not a Developing Country Act):

Ինչպես նշում է The Hill-ը, փաստաթուղթը հանձնարարում է ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի ղեկավարին «միջազգային կազմակերպություններում, որոնց անդամակցում են Եւ Միացյալ Նահանգները, Եւ Չինաստանը, «ձգտել» փոխել Չինաստանի կարգավիճակը «միջինից բարձր եկամուտ ունեցող, բարձր եկամուտ ունեցող կամ զարգացած երկրի կարգավիճակի»:

Օրինագծի համաձայն՝ պետքարտուղարը պետք է հետեւի նաեւ, որ Չինաստանը զարգացող երկրի կարգավիճակի պատճառով օգնություն կամ արտոնություններ չստանա:

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Փոխվարչապետ Միեր Գրիգորյանը որոշում է ստորագրել, որով Վիկտորյա Այդինյանին նշանակվել է իր խորհրդական:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ մասով՝

Վիկտորյա Այդինյանին նշանակել փոխվարչապետ Միեր Գրիգորյանի խորհրդական»,-ասված է որոշման մեջ:

Նշենք, որ Վիկտորյա Այդինյանը 2018թ.-ից մինչեւ 2020թ.-ի դեկտեմբեր եղել է Տիգրան Ավինյանի օգնականը:

ԵՌՕՐՅԱ ՀԱՎԱՔՆԵՐ

2023 թվականի ուսումնական տարվա պատրաստության պլանի համաձայն՝ մարտի 28-ին ՊՆ վարչական համալիրում մեկնարկել են ՀՀ ԶՈՒ ղեկավար կազմի հետ անցկացվող եռօրյա օպերատիվ հավաքները:

Հավաքների ընթացքում կլինեն զեկույցներ, դասախոսություններ, կանցկացվեն ցուցադրական պարապմունքներ:

Հավաքների առաջին օրը մասնակիցներին ողջունել է պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը:

Անդրադառնալով տարածաշրջանային ռազմաքաղաքական իրավիճակին եւ այդ համատեքստում զինված ուժերի առջեւ դրված խնդիրներին՝ նախարարը կարեւորել է զորքերում մարտունակության շարունակական բարձրացումը, առաջնագծի կահավորման եւ ամրաշինական աշխատանքների իրականացումը, ինչպես նաեւ անդրադարձել զինված ուժերում մեկնարկած բարեփոխումներին:

«ԼԱՊՏԵՐԻԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔ

Երեւանի «Լապտերիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի կողմից խարդախություն կատարելու, վստահված գույքը հափշտակելու եւ կաշառք ստանալու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է: ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ ծանր հանցագործությունների քննության բաժնում կատարված քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ 2001թ. մինչեւ 2019թ. հունվար ամիսն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով Երեւանի «Լապտերիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը՝ Գ.Հ.-ն նշված մանկապարտեզի տարբեր հաստիքներին գրանցել է իրեն ծանոթ 17 անձանց, որոնք աշխատանքի չեն հաճախել, եւ որոնց մի մասն առհասարակ տեղյակ չի եղել տվյալ ՀՈԱԿ-ում իրենց՝ որպես աշխատող գրանցված լինելու մասին: Այդկերպ տնօրենը շարունակաբար հափշտակել, ապօրինի եւ անհատույց իրենն ու այլ անձանցն է դարձրել նշված անձանց անվամբ դուրս գրված աշխատավարձի՝ իր տնօրինմանը փաստացի հանձնված առանձնապես խոշոր չափերով՝ 19.938.294 ՀՀ դրամ գումարը:

Բացի այդ, նշված ժամանակահատվածում մանկապարտեզի տնօրենը, տեղյակ լինելով վարձու աշխատողին տրվող մայրության նպաստի մասին, հարսի հղիության վիճակն օգտագործելով, վերջինիս հետ նախնական համաձայնությամբ, «Լապտերիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ աշխատանքի ընդունման դիմում են մուտքագրել: 2017թ. սեպտեմբերի 1-ին նա հարսին ձեւական ընդունել է աշխատանքի՝ որպես գլխավոր հաշվապահ, սակայն վերջինիս գործառույթների կատարումը թողել է նախկին հաշվապահի վրա՝ վարձատրելով նրան:

Այնուհետեւ մանկապարտեզի տնօրենը ստորագրել եւ հաստատել է աշխատաժամանակի հաշվարկի վերաբերյալ կեղծ տեղեկագրեր, որոնց հիման վրա՝ հարսի անվամբ հաշվարկվել եւ վճարվել է 412.460 ՀՀ դրամ գումարի չափով հղիության նպաստ, որը հափշտակվել է՝ Երեւան համայնքին պատճառելով զգալի չափի վնաս:

Նախաքննության ընթացքում «Լապտերիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի կողմից վերականգնվել է Երեւան համայնքին պատճառված ամբողջ վնասը՝ 20.350.754 ՀՀ դրամ գումարը: Յուրացման, վատնման եւ վատնմանն օժանդակելու մի քանի դրվագներով մանկապարտեզի հաստիքներին գրանցված, սակայն աշխատանքի չհաճախած մի քանի անձանց, տնօրենի հարսի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չի իրականացվել՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ մանկապարտեզի տնօրենին ներկայացվել է վերջնական մեղադրանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով, 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 435-րդ հոդվածի 2- րդ մասի 2-րդ կետով: Խոշոր չափերով կաշառք տալու համար մեղադրանք է ներկայացվել նաեւ երաժշտության դաստիարակչուհուն: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը: Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ քրեական վարույթը դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀՌՈՄԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎՆԱՍՆԵՐԸ

Հռոմի Ստատուտի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը շարունակվում է բուռն քննադատության ենթարկվել: Հռոմի ստատուտի կարգավորումների համաձայն՝ միջազգային քրեական դատարանով քրեական պատասխանատվության ենթարկված անձանց նկատմամբ չի կարող կիրառվել համաներում կամ ներում: Այստեղ հետաքրքիր է, որ, մեր Սահմանադրության համաձայն, պետությունն ինքն է նախագահի հրամանագրով ներում եւ համաներում շնորհում, կամ նման քայլ կարող է կատարել ԱԺ-ն: Հենց այդ հիմքով 2004 թվականին ՍԴ-ն Հռոմի փաստաթուղթը հակասող էր ճանաչել մեր Սահմանադրությանը: Բազմաթիվ երկրներ զերծ են մնում Հռոմի փաստաթուղթը վավերացնելուց, քանի որ միջազգային քրեական դատարանը, նրանց կարծիքով, առաջացնում է խնդրահարույց իրավիճակ:

Հիշեցնենք, որ Հայաստանը Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը ստորագրել էր 1999թ.-ի հոկտեմբերի 1-ին, սակայն չէր վավերացրել: Գործընթացն ընդհատվել էր ՍԴ-ի՝2004թ.-ի օգոստոսի 13-ի որոշմամբ, որով Հռոմի փաստաթուղթը ճանաչվել էր 1995թ.-ի Սահմանադրությանը հակասող: Հաշվի առնելով, որ այդ ժամանակից ի վեր Սահմանադրությունը երկու անգամ փոփոխվել է, Նիկոլ Փաշինյանի կառավարությունը որոշեց միջազգային պայմանագրի վավերացման գործընթացը վերսկսել ու այդ նպատակով եւս մեկ անգամ դիմել ՍԴ:

2022 թվականի վերջին ՀՀ կառավարությունը նախաձեռնեց Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության վավերացման գործընթացը: Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը դեկտեմբերին հայտարարեց, որ հարցի հրատապությունը պայմանավորված է Ադրբեջանի ՋՈ-ի՝ ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ իրականացրած լայնածավալ ռազմական ագրեսիայի ու տարածքների օկուպացման փաստերով: Իսկ ՀՀ սահմանադրական դատարանը մարտի 24-ին որոշեց, որ Հայաստանի միացումը միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությանը համապատասխանում է երկրի հիմնական օրենքին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ ԵՆ

ԳՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻ ԲԱԶՄԱԹԻՎ ԴԵՊՔԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում իրականացված քննությամբ բացահայտվել են Երեւան քաղաքում կատարված բազմաթիվ բնակարանային գողություններ եւ մեկ գողության փորձի դեպքեր:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Երեւան քաղաքի 43-ամյա բնակիչը, հափշտակություն կատարելու շուրջ նախապես համաձայնության գալով 42-ամյա տղամարդու, առանձին դեպքերում՝ քննությամբ ինքնությունը չպարզված անձի հետ, Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ագաթանգեղոս, Պուշկին, Ամիրյան փողոցների տարբեր շենքերի թվով 7 բնակարաններից 2022թ. տարբեր ամիսներին՝ օրվա տարբեր ժամերին, կատարել են գողություններ բնակարան ապօրինի մուտք գործելու միջոցով:

Մասնավորապես, նախապես կատարել են դերաբաշխում. օժանդակող անձինք սպասել են դրսում՝ հսկելով շենքերի բակերի եւ մուտքերի անցուդարձը: 43-ամյա տղամարդը, բարձրանալով համապատասխան հարկեր, հարմարեցված բանալու գործադրմամբ բացել է ինչպես ՀՀ քաղաքացիներին պատկանող, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիների կողմից վարձակալված բնակարանների դռները եւ մուտք գործելով՝ հափշտակել է բջջային հեռախոսներ, համակարգիչներ, թանկարժեք ոսկյա զարդեր, փաստաթղթեր, տարբեր չափերի եւ արժույթների գումարներ, կենցաղային իրեր: Մեկ դեպքում էլ վերջինս միայնակ է մուտք գործել Պուշկին փողոցում գտնվող բնակարան եւ կատարել հափշտակություն:

Պարզվել է, որ նույն մեխանիզմով 43-ամյա տղամարդը փորձել է մուտք գործել Նալբանդյան փողոցում գտնվող շենքի բնակարան, սակայն չկարողանալով բացել բնակարանի մուտքի դուռը՝ հանցակցի հետ հեռացել են:

Բացահայտված 7 դրվագ բնակարանային գողությունների դեպքերով պարզված՝ քաղաքացիներին պատճառված գույքային վնասը դրամական արտահայտությամբ կազմել է ընդհանուր 15,3մլն ՀՀ դրամ: Ձեռք բերված տվյալների հիման վրա՝ Երեւան քաղաքի 43-ամյա բնակչին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (7 դրվագ), 456-րդ հոդվածի 1-ին մասով եւ 44-254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

Իսկ 42-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել 46-254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) եւ 44-254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Նրա նկատմամբ խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը:

Նշված 2 անձանց մասով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննության առնելու:

Կատարված բնակարանային գողություններից մի քանիսին որպես օժանդակող մասնակցած այլ՝ դեռեւս ինքնությունը չպարզված անձանց մասով նախաքննությունը դեռեւս շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 27-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 55 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐՔ

ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Հաշվի առնելով պետական սահմանի Բագրատաշենի անցումային կետում արձանագրվող տրանսպորտային միջոցների հոսքերի ավելացումը՝ հնարավոր կուտակումներից խուսափելու նպատակով, ՀՀ ՊԵԿ նախագահի 2023 թ. մարտի 23-ի թիվ 276-Լ հրամանով, լրացում է կատարվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թ. հունիսի 6-ի թիվ 342-Լ հրամանում: Այս մասին տեղեկանում ենք ՊԵԿ-ից: Արդյունքում սահմանվել է, որ 2023 թվականի ապրիլի 2-ից մինչեւ 2023թ.-ի մայիսի 31-ը ներառյալ, պետական սահմանի Բագրատաշենի անցումային կետի փոխարեն, Գոգավանի անցումային կետում գրանցված տարանցիկ հայտարարագրերով ինքնաշարժ եղանակով ներմուծվող ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 ապրանքային դիրքերին դասվող տրանսպորտային միջոցների «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգերով մաքսային գործառնությունները, ինչպես նաեւ վերոնշյալ ապրանքային դիրքերին դասվող եւ ազատ շրջանառության համար բացթողնման նպատակով որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունները, հայտարարատուի ցանկությամբ, կարող են իրականացվել նաեւ ՀՀ ՊԵԿ Արեւելյան մաքսատուն-վարչությունում:

ԿԿՐԿՆԱՊԱՏԿՎԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Ֆրանսիան կկրկնապատկի 155-միլիմետրանոց արկերի մատակարարումներն Ուկրաինային: Նման տեղեկություն է հայտնել երկրի պաշտպանության նախարար Սեբաստիեն Լեկոռնյուն Figaro թերթին տված հարցազրույցում: «Մենք կմատակարարենք նաեւ Ուկրաինայի հակահարձակման համար անհրաժեշտ ցամաքային սարքավորում. մենք կկրկնապատկենք 155-միլիմետրանոց արկերի մատակարարումները, մարտի վերջից կմատակարարվի ամսական երկու հազար հատ», - ասել է նա: Բացի այդ, նախարարի խոսքով՝ առաջիկայում Ուկրաինայի զինված ուժերին կհանձնվի Samp/T զենիթահրթիռային համալիր: Դրա հետ մեկտեղ, հավելել է Լեկոռնյուն, քննարկվում է Ուկրաինայի համար օգնության հիմնադրամին կրկնակի վճարումների հարցը: Ըստ Ֆրանսիայի ՊՆ ղեկավարի՝ նախկինում հատկացված 200 մլն եվրոն արդեն ամբողջությամբ ծախսվել է: Լեկոռնյուն անցյալ շաբաթ հայտարարել է, որ Ֆրանսիան պլանավորում է մինչեւ տարեվերջ կրկնապատկել իր ռազմական արտադրության ծավալը: Լրատվամիջոցների տեղեկություններով՝ Պաշտպանության նախարարությունը ռազմարդյունաբերական ընկերությունների հետ պայմանավորվել է մեծացնել զինամթերքի արտադրությունն ինչպես Ուկրաինայի զինված ուժերի, այնպես էլ սեփական բանակի համար, ինչպես նաեւ վերսկսել ռազմավարական նշանակություն ունեցող շուրջ 20 անուն ռազմամթերքի արտադրություն իր տարածքում: 155 մմ տրամաչափի հրետանին առկա է ՆԱՏՕ-ի սպառազինության մեջ: Ֆրանսիան, մասնավորապես, Ուկրաինա է ուղարկել TRF1 քարշակային հաուբիցներ եւ Caesar ինքնագնաց հրետանային կայանք:

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՀԱՏԵԼ Է ՇՓՄԱՆ ԳԻԾԸ

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը հայտարարություն է տարածել. «Մարտի 26-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, Արցախի Մարտունու շրջանի Խզազեն տակ կոչվող տեղամասի խաղողի այգում էման եւ մաքրման աշխատանքներ կատարելիս հակառակորդի դիրքերից հրաձգային զենքերով անկանոն կրակոցներ են արձակվել Սոս գյուղի բնակիչներ Ռազմիկ Հարությունյանի եւ Երվանդ Բալայանի ուղղությամբ:

Նույն օրը՝ ժամը 11:00-ի սահմաններում, Թաղավարդ գյուղի բնակիչներ Վովա Խաչատրյանը եւ Ռուբեն Ալավերդյանը Շեխերի երես կոչվող տեղամասի ցորենի դաշտում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս հայտնվել են ադրբեջանցի զինծառայողների կրակոցների թիրախում: Հարակից ադրբեջանական մարտական դիրքերից հրաձգային տարբեր զինատեսակներով անկանոն կրակոցներ են արձակվել Արցախի քաղաքացիների ուղղությամբ: Դադարեցվել են գյուղատնտեսական աշխատանքները:

Նույն օրը՝ ժամը 11:30-ի սահմաններում, Մարտակերտ քաղաքի վարչական տարածքում՝ Ալյոշա Ջաքարյանին պատկանող նռան այգում, գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս ադրբեջանական մարտական դիրքերից բանվորների ուղղությամբ հրաձգային զինատեսակներից անկանոն կրակոցներ են արձակվել:

Մարտի 25-ին Ադրբեջանը հատել է Արցախի Հանրապետության զինված ուժերի հետ շփման գիծը եւ որոշակի դիրքային առաջխաղացում ապահովել Արցախի Հանրապետության տարածքում՝ Ստեփանակերտ-Լիսագոր գրունտային ճանապարհի ուղղությամբ:

Մարտի 27-ին՝ ժամը 9:00-ի սահմաններում, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումը կրկին փորձել է առաջխաղացում կատարել Ստեփանակերտ-Լիսագոր գրունտային ճանապարհի հարակից բարձունքներից մեկի ուղղությամբ: Նշված հատվածում մարտական հերթապահություն իրականացնող ՊԲ զինծառայողների կանխարգելիչ գործողությունների շնորհիվ ադրբեջանական ստորաբաժանման առաջխաղացման փորձը կասեցվել է:

Վերոնշյալ գործողություններով Ադրբեջանը փորձում է խզել միակ կապը Ստեփանակերտի եւ Շուշիի շրջանի մի շարք գյուղերի միջեւ, իսկ թիրախավորելով խաղաղ բնակիչներին՝ խաթարում է Արցախի ժողովրդի կյանքի, նրանց խաղաղ գոյակցության իրավունքը, փորձում ստեղծել վախի մթնոլորտ:

Անտեսելով Արդարադատության միջազգային դատարանի որոշումը, միջազգային մարդասիրական իրավունքի կարեւորագույն դրույթները, խախտելով 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունները՝ Ադրբեջանը մարտահրավեր է նետում ողջ միջազգային իրավակարգին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հրատապ գրություններ եմ ուղարկել միջազգային գործընկերներիս՝ խնդրելով իրենց մանդատի ողջ ուժով գործադրել միջնորդական ջանքեր՝ ուղղված Բերձորի միջանցքի անհապաղ ապաշրջափակմանն ու Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության զսպմանը:

Միաժամանակ խնդրել եմ հանդես գալ հրապարակային քննադատական հայտարարությամբ՝ ուղղված Ադրբեջանի հանցավոր վարքագծին»:

ՄԱՐՔ

ԴԵՆԴՐՈՊԱՐԿԻ ՋՐԱՌԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԵՆ, ՎՆԱՍՆԵՐԸ՝ ՈՉ

Իջեւանի դենդրոպարկի երկարամյա տնօրեն Մեխակ Սայադյանը հայտնեց, որ Իջեւանի գինու, կոնյակի գործարանը, Աղստեւի աջ ափին պաս կառուցելով, այժմ դենդրոպարկի ջրառը վերագործարկել է: Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից Աղստեւ գետի հունում՝ ափին նախկինում կատարված աղօրինի մեծածավալ շինարարության հետեւանքով ավելի քան երկու տարի առաջ դենդրոպարկի ջրառը զրկվել էր Աղստեւի ինքնահոս ջրից: Դենդրոպարկի ջրառը վերագործարկելու համար պահանջվեց երկու տարի եւ յոթ ամիս:

Ըստ Մ. Սայադյանի՝ այդ երկու տարի եւ յոթ ամսում դենդրոպարկում չորացան շուրջ 1500 հազվագյուտ, արժեքավոր ծառեր, թփեր եւ մոտ 24 հազար տնկի: Այդ մեծ վնասների վերաբերյալ Հայաստանի բնապահպանական կազմակերպությունները լռել են: ՀՀ քննչական կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին, որ Աղստեւ գետի մաս հանդիսացող ջրային հողն առանց ՀՀ ջրային կոմիտեի եզրակացության վարձակալությամբ Իջեւանի գինու, կոնյակի գործարանին հանձնելու եւ գործարանի կողմից ապօրինի շինարարություն կատարելու դեպքի առթիվ 2021թ. հոկտեմբերի 15-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով, քրեական վարույթ է նախաձեռնվել, նախաքննության ներկա փուլում որեւէ մեկի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված չէ: Իջեւանի գինու, կոնյակի գործարանն առանց շինթույլտվության հենապատ կառուցելու համար 2021թ. մարտի 29-ին տուգանվել է 200 հազար դրամի չափով:

Գործարանը շարունակել է կառուցապատումը եւ 2021թ. հուլիսի 14-ին երկրորդ անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ 2 միլիոն 500 հազար դրամի չափով: Գրեթե մեկուկես տարվա ընթացքում կատարած քննության արդյունքում ՀՀ քննչական կոմիտեն այդպես էլ ոչ մեկին մեղադրանք չի առաջադրել, չի պարզել, թե Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից Աղստեւ գետը հունը, ափը ավերելու, հարյուրավոր մետր երկարությամբ անօրինական մեծ պատ կառուցելու, Իջեւանի դենդրոպարկը ջրազրկելու հետեւանքով շրջակա միջավայրին, Իջեւանի դենդրոպարկին ինչքան վնաս է պատճառվել: Ավելին՝ Իջեւանի գինու, կոնյակի գործարանը «պարգեւատրվել է»՝ վարձակալությամբ դենդրոպարկից ստանալով 5,7 հեկտար տարածք: 2023թ. հունվարի 16-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում կայացել է Իջեւանի դենդրոպարկի տարածքի երկրորդ մասի՝ 5,7 հեկտարի վարձակալության տրամադրելու մրցույթ, որում հաղթել է Իջեւանի գինու, կոնյակի գործարանը: 2023թ. փետրվարի 2-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն (այժմ՝ նախկին) Լեւոն Գաբրիելյանի եւ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի միջեւ կնքվել է վարձակալության պայմանագիր, 5,7 հա տարածքը, որը դենդրոպարկի մաս է, հատկացվել է գինու, կոնյակի գործարանին հանգստի գոտու վերածելու նպատակով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 13-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԲՐՈՆԶԻ ԱՆՑՄԱՆ ՓՈՒԼ

ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի եւ ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հնագետները պեղումներ են իրականացրել Լեռնակերտի N 1 դամբանադաշտում:

Բացվել են միջին բրոնզից ուշ բրոնզի անցման փուլին (Ք.ա. XVI դ. II կես-XV դ. I կես) վերագրվող թաղումներ, որոնցում միաժա-մա-նակ հանդիպել են եւ՛ միջինբրոնզեդարյան կարմիրբերդյան, եւ՛ ուշբրոնզե-դարյան ա-ռարկա--ներ: Անցումային փուլի (միջին բրոնզից ուշ բրոնզ) այս դամբաններն ունեն 5-15 մետր տրա-մագծով հենա-պատ-կրոմ-լեխ: Խցերը հիմնա-հո--ղա-յին են՝ ուղղված հյուսիս-հարավ: Ուշ բրոնզի տարբեր փուլերին վերա-գրվող թաղումներում աճյունը դրված է եղել դիադրման եւ վերաթաղման եղանակներով: Այս դամբաններում ուղեկցող գույքը խեցանոթներն են, հազվադեպ՝ ուլունքներ: Երկաթի դարի վաղ շրջափուլին վերաբերող դամբաններն ունեն հենա-պատ-կրոմլեխներ (8-20 մ տր.), մանր քարերից կազմված ոչ բարձր թմբեր եւ արեւելք-արեւմուտք ուղղված սալարկղային խցեր: Երկաթեդարյան իջեցուկ դամբաններում փաստագրվել են խմբային եղանակով արված թաղումներ: Բացահայտվել է, որ այս դամբանախմբում խեղված չորս դամբան-ներն արեւելյան հատվածում ունեն կցակառույցներ՝ նախատեսված թաղումն ուղեկցող գույքի համար:

Երկաթեդարյան ամրոց Վարի Բերդի բլրի արեւելյան լանջին օդալուսանկարահանման միջոցով հավաստվել է «անվաձեւ» կառույց, որը բաղկացած է կից շրջանաձեւ այլ կառույցներից: «Անվաձեւ» կառույցներ Հայաստանում հայտնի են Արագածի նախալեռներում, որտեղ դրանք հանդիպում են «անապատի օդապարուկներ» կոչված հուշարձանների համատեքստում: «Անվաձեւ» կառույցի մնացորդներ փաստագրվել է նաեւ Արագած լեռան ամենաբարձրադիր հնավայրում՝ Կարմիր սարում, որտեղ պեղումներով բացահայտվել են վիշապ քարակոթողների կուտակում՝ իրենց նախնական միջավայրում: Լեռնակերտի օրինակն առանձնահատուկ է նրանով, որ այն առաջին անգամ փաստագրվում է ամրոցի համատեքստում, սակայն վերջինիս գործառույթը դեռ պարզ չէ:

Պեղումներով գտնվել են մեծ թվով խեցեղեն եւ քարե առարկաներ՝ անոթներ, աղորիքներ, անվակներ եւ այլն, կենդանական ոսկորներ՝ հիմնականում ընտանի՝ մանր եւ խոշոր եղջերավոր անասուններ:

«ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ»

ՆԱԽԱԳԻԾԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել ««Ակադեմիական քաղաք» հիմնադրամ ստեղծելու եւ հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Ինչպես տեղեկանում ենք ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից, «ՀՀ կրթության մինչեւ 2030 թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նախատեսված է ակադեմիական քաղաքի ստեղծում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության եւ հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ:

««Ակադեմիական քաղաք» հիմնադրամ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը պայմանավորված է ակադեմիական քաղաքի ստեղծման աշխատանքները կազմակերպելու, համակարգելու եւ վերահսկելու հրամայականով: Պետության կողմից հիմնադրամի ստեղծումը առավել նպատակահարմար կազմակերպական ձեւ է ընտրվել:

«Ակադեմիական քաղաք» հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն է:

«Ակադեմիական քաղաք» հիմնադրամը պետք է իրականացնի ակադեմիական քաղաքի նախագծումն ու կառուցումը՝ որպես որակյալ կրթության եւ հետազոտության համար արդիական միջավայր, համապատասխան շենքային ենթակառուցվածքների կառուցումը, պահպանումը եւ բարելավումը, հետազոտությունը եւ ուսումը խթանող, գրավիչ, ապահով եւ անվտանգ, բազմաֆունկցիոնալ ֆիզիկական եւ ժամանակակից թվային տեխնոլոգիաներով հագեցած համագործակցային միջավայրի ստեղծումը, մարզադահլիճների, գրադարանների, նորարարական ոճով կահավորված անհատական եւ թիմային աշխատանքների տարածքների, ինչպես նաեւ ստեղծարար գործունեությանը նպաստող ֆիզիկական միջավայրի ստեղծումը:

Նախագծի հաստատումից հետո կնշանակվի հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, եռամսյա ժամկետում կձեւավորվի հոգաբարձուների խորհրդի կազմ: Խորհուրդը բաղկացած է ութ անդամից: Ի պաշտոնե խորհրդի անդամ եւ նախագահն է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարը: Խորհրդի մյուս ի պաշտոնե անդամներն են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարը, ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահը, ՀՀ արդարադատության նախարարը, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարը, ՀՀ ֆինանսների նախարարը, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահը: Խորհուրդը հաստատում է հիմնադրամի տարեկան ծրագիրը, բյուջեն եւ սահմանված այլ գործառույթներ:

Նախագծի վերաբերյալ առաջարկություններ կարելի է ներկայացնել մինչեւ 2023 թ. ապրիլի 12-ը ներառյալ:

Նախագծի վերաբերյալ հանրային լսումը նախատեսված է ապրիլի 7-ին՝ ժամը 16:00-ին, Գիտության կոմիտեում (Օրբելի եղբայրների 22):

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» Գ

«ՄԵԴԻԱ ՍԻՍԹԵՄՍ»-Ի 10-ԱՄՅԱԿԸ

Մարտի 21-ին Hard Rock Cafe Yerevanում կայացավ «Մեդիա Սիսթեմս» թվային գովազդով զբաղվող գործակալության տասնամյակին նվիրված միջոցառումը. անցկացված երեկոյի հատուկ հյուրն էր Ֆորբը:

10 տարի շուկայում. թվային մարքեթինգ ներկայացնող ընկերության համար այս ժամանակահատվածն արդեն կայուն եւ հուսալի գործելաոճի ապացույց է: Նշելով իր 10-ամյակը՝ «Մեդիա սիսթեմս»-ն ամփոփեց տարիների ընթացքում ձեռք բերած հաջողությունները, խոսեց ապագա պլանների մասին եւ ընդունեց գործընկերների շնորհավորանքները:

«Մենք շատ ուրախ ենք, որ այս 10 տարվա ընթացքում կարողացել ենք ձեւավորել ամուր հարաբերություններ մեր գործընկերների հետ, մասնակցել բազմաթիվ բիզնեսների թվայնացման պրոցեսին եւ ունենալ մշտապես կայուն զարգացում: Իհարկե, լուրջ մարտահրավեր է տարիներ շարունակ պահպանել առաջատարի դիրքը, եւ միեւնույն ժամանակ դա շատ պարտավորեցնող է»,- նշել է ընկերության գործադիր տնօրեն Յանա Յանիկյանը:

Վերջին 10 տարվա ընթացքում «Մեդիա սիսթեմս» ընկերությունը մատուցում է թվային մարքեթինգի բազմապրոֆիլ ծառայություններ: Ընկերության հիմնական ուղղվածությունը մեդիա գնման եւ պլանավորման պրոցեսների իրականացումն է լոկալ եւ միջազգային հարթակներում, սակայն «Մեդիա սիսթեմս»-ը կարող է իրագործել թվային մարքեթինգի դաշտում ցանկացած առաջարկ եւ պատվեր: Թվային գովազդի ծառայություններ՝ առանց որեւէ աշխարհագրական սահմանափակման, ոչ ստանդարտ ձեւաչափով եւ յուրահատուկ տեխնոլոգիական լուծումներով: «Մեդիա սիսթեմս» գործակալությունը մշտապես հետեւում է համաշխարհային թրենդերին՝ ինտեգրելով դրանք հայաստանյան շուկա:

Ներկա գտնված 90+ ընկերությունների ներկայացուցիչները եւս միացան շնորհավորանքներին՝ պատմելով իրենց համագործակցությունների եւ համատեղ իրականացրած պրոյեկտների մասին:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆԱԽԱԳԻԾ

ԹԱՏՐՈՆՆԵՐԸ ԿՄԻԱՎՈՐՎԵՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը մարտի 27-ին շրջանառության մեջ է դրել մի նախագիծ, որով առաջարկում է «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը միացնել վերակազմակերպել: Հիմնավորման մեջ նշվում է, թե նպատակներից մեկը «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության ստեղծագործական ներուժը առավել արդյունավետ եւ նպատակային օգտագործելն է:

Հիմնավորման մեջ նշվում է, թե այսպես «Բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոնի թատերախումբը հնարավորություն կունենա իր ստեղծագործական նպատակներն իրագործելու համար լիարժեքորեն օգտվել Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տարածքային (մեծ բեմ, Blaծk box), գույքային եւ նյութա-տեխնիկական հնարավորություններից, գովազդատեղեկատվական արշավ-ների նախատեսված մասնագիտական-կադրային եւ ֆինանսական հնարավորություն-ներից: Սրանով կլուծվի նաեւ դերասանական խումբն առավել լայն ստեղծագործական հարաբերություններում ներգրավելու հարցը, կխթանվեն փոխադարձ ստեղծագործական շփումները, կստեղծվի հնարավո-րություն տարբեր ռեժիսորական ձեռագրերի հետ առնչվելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը վերջին տարիներին ակտիվորեն ընդլայնում է միջազգային համագործակցության շրջանակները, իրականացնում է տարաբնույթ կրթական-մշակութային ծրագրեր, ցուցահանդեսներ, ընդլայնում է խաղացանկը, նախաձեռնում փառատոններ, եւ այս ամենն ընդլայնում է նաեւ ստեղծագործական հնարավորությունները:

Բանն այն է, որ ներկայում «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության հետ գործում են նույն ենթակառուցվածքային համակարգում (շինություն, կոմունալ հանգույցներ եւ այլն): Փաստացի, առանց մասնագիտական եւ հանրային քննարկման, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին պատկանող շենքի տարբեր հարկերից տարբեր չափերի տարածքներ առանձնացվել են եւ տրվել «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը: Այս ամենին զուգահեռ, կադաստրային տարածքի եւ փաստացի զբաղեցրած տարածքների մեջ նույնպես առկա են տարբերություններ: Այս ամենն առաջացնում է լոգիստիկ բազմաթիվ խնդիրներ:

«Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը ողջ գոյության ընթացքում կոմունալ բոլոր ծախսերը հոգացել է Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը, մոտավոր հաշվարկով՝ յուրաքանչյուր տարի 3.5-4 միլիոն դրամ: «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության վերջին տարիների հաշվետվությունները ցույց են տալիս, որ ֆինանսական եւ ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների թերակատարումը ձեռք է բերել պարբե-րական բնույթ:

Ամեն դեպքում, նկատենք, որ «Գոյ» թատրոնի անձնակազմը դեմ է այս նախագծին եւ ցանկանում է իր գործունեությունը շարունակել առանձին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՂԹԵՑ MMA ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Մարտի 26-ին Հայաստանում տեղի ունեցավ Doping time MMA միջազգային հեղինակավոր մրցաշարը, որին մասնակցում էին մարզիկներ 5 երկրից: MMA միջազգային հայաստանյան մրցաշարը եզրափակվեց սպորտային կարատեի աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, Հայաստանի կարատեի միության հիմնադիր Կամո Ունանյանի MMA-ի դեբյուտային մենամարտով, որը դարձավ երեկոյի գլխավոր մենամարտը: Կամոն մրցեց ռուս մարզիկ Դանիլ Օլեյնիկի հետ, որը ռուսական Hard core անվանի ընկերությունում ունի մի քանի հաղթանակներ:

Չնայած նրան, որ MMA-ի դեբյուտային մենամարտի հենց առաջին ռաունդում Կամոն ստացավ ոտքի վնասվածք, բայց շարունակելով մարտը՝ հենց երկրորդ ռաունդում ջախջախիչ հաղթանակ տարավ մրցակցի նկատմամբ:

Հավելենք, որ ողջ մարտը Կամոն պահեց իր տիրապետության տակ՝ շանս չթողնելով մրցակցին: Հիշեցնենք, որ մարտից առաջ Դանիլ Օլեյնիկը հայտարարել էր, որ հաղթանակի շանսեր չի թողնելու Կամո Ունանյանին, մինչդեռ ստացվեց հակառակը. Կամո Ունանյանը շանս չթողեց Դանիլ Օլեյնիկին:

Նշենք, որ ապրիլի 8-ին Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում կկայանա MMA սերիա մրցաշարը, որին նախատեսված է նաեւ Կամո Ունանյանի մենամարտը, սակայն Կամոյի մասնակցությունը դեռեւս հարցականի տակ է, քանի որ նա այս մարտի ընթացքում ստացել է ոտքի վնասվածք:

Ի դեպ, տարվա ընթացքում Կամոն պատրաստվում է եւ՛ Հայաստանում, եւ՛ Եվրոպայում մասնակցել MMA-ի մարտերին մի քանի տարբեր մրցաշարերում:

«ԱՐՏԱՎԱԶԴ»

ՈՎՔԵ՞Ր ԴԱՐՁԱՆ ԴԱՓՆԵԿԻՐՆԵՐ

Թատրոնի միջազգային օրը, Հայաստանի թատերական գործիչների միությունը Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում անցկացրեց 22-րդ «Արտավազդ» ամենամյա թատերական մրցանակաբաշխությունը՝ նվիրված երջանկահիշատակ ՀՀ ժողովրդական արտիստ Վահե Շահվերդյանի հիշատակին:

«Լավագույն տղամարդ դերակատար» անվանակարգում մրցանակը տրվել է Նարեկ Բաղդասարյանին՝ Ս. Սարգսյանի անվ. Համազգային թատրոնում «Խատուտիկի գինի» (Դագլաս Սփոլդինգ), «Վեներան մուշտակով» (Թոմաս Նովաչեկ) ներկայացումներում դերերի համար:

«Լավագույն կին դերակատար» անվանակարգում «Արտավազդ»-ի է արժանացել Տաթեւ Ղազարյանը՝ Գյումրու Վ. Աճեմյանի անվ. դրամ. թատրոնի «Միզերի» ներկայացման մեջ Էննի Ուիլքսնին մարմնավորելու համար:

«Երկրորդ պլանի լավագույն տղամարդ դերակատար» անվանակարգում հաղթել է Վյաչեսլավ Շամիրյանը, Կ. Ստանիսլավսկու անվ. Ռուսական թ-ն, «Բալենու այգին» (Ֆիրս):

«Երկրորդ պլանի լավագույն կին դերակատար» անվանակարգում մրցանակը հանձնվել է Լիլիա Մուկուչյանին, Կ. Ստանիսլավսկու անվ. Ռուսական թ-ն, «Վիյ» (Պանոչկա, Վիուկ):

«Լավագույն սցենոգրաֆիա» անվանակարգում մրցանակը տրվել է Գարեգին Եվանգուլյանին, «Կոշկավոր կատուն», Հ. Պարոնյանի անվ. թ-ն, «Կատուն՝ շիկացած տանիքին», Պատանի հանդիսատեսի թ-ն:

«Լավագույն զգեստների նկարիչ» է ճանաչվել Թամարա Բարոյանը, Ս. Սարգսյանի անվ. Համազգային թ-ն, «Խատուտիկի գինի»:

«Լավագույն լուսային նկարիչ» անվանակարգում մրցանակը հանձնվել է Արամ Աղաջանյանին, Հ. Թումանյանի անվ. տիկնիկային թ-ն, «Լարովի նարինջ»:

«Լավագույն երաժշտության հեղինակ» անվանակարագում հաղթել է Նարեկ Կոսմոսը, «Միզերի», Գյումրու Վ. Աճեմյանի անվ. դրամ. թ-ն, «Բովանդակություն», Երեւանի թատրոնի եւ կինոյի ինստիտուտի եւ Գյումրու Վ. Աճեմյանի անվ. թ-ի հետ համատեղ նախագիծ:

«Լավագույն թատերախոսական» է համարվել Նաիրա Շահվալադյանի «Արթնացրու՛ միտքդ, հետո էլ՝ հոգիդ», «Ուիլյամ Գիբսոնի «Հրաշագործը»՝Նիկոլայ Ծատուրյանի բեմադրությամբ» աշխատանքը:

«Լավագույն երիտասարդ դերասան» անվանակարգում «Արտավազդ»-ի է արժանացել Սեյրան Մովսիսյանը, Պատանի հանդիսատեսի թ-ն, «Սիրելի Ելենա Սերգեեւնա» (Վոլոդյա):

«ՄԻԼԱՆ»-Ը ՊԱՏՐԱՍՏ Է ՎՃԱՐԵԼ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի եւ ռուսական «Կրասնոդար»-ի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանի ծառայություններով հետաքրքրված է իտալական գրանդ ակումբներից մեկը:

«Միլան» ֆուտբոլային ակումբը պատրաստ է Սպերցյանի համար վճարել 8 միլիոն եվրո: Ռուսական «Կրասնոդար»-ը, սակայն, հայ կիսապաշտպանի տրանսֆերային արժեքը գնահատում է 12 միլիոն եվրո:

Էդուարդ Սպերցյանը «Կրասնոդար»-ի ակադեմիայի սան է: Ծնվել է 2000 թվականին: 2019 թվականից հանդես է գալիս «Կրասնոդար»-ի հիմնական կազմում: Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմին Սպերցյանը միացել է 2021 թվականին, նորամուտը հավաքականում նա նշել է Հայաստան-Ռումինիա խաղում: Առաջին գոլը հավաքականի կազմում Սպերցյանը հեղինակել է նորամուտի խաղում:

● *Մարտի 29-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ծննդյան վկայական» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՞Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ով պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Անժելա Մարտիրոսյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Մարտիրոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն):

Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում դիմողը լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձեւը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը: Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ընտրություններին մասնակցելու համար ինչ է անհրաժեշտ կուսակցության համար: Խնդրում եմ ասել տեղական ինքնակառավարման մարմինների եւ խորհրդարանական ընտրությունների առանձնահատկություններն ու տարբերությունները:

Միքայել Փանոսյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կուսակցության ստեղծման գործընթացում տարբերություններ առկա չեն: Կուսակցությունները կարող են մասնակցել ինչպես խորհրդարանական, այնպես էլ ՏԻՄ ընտրություններին: Բուն ընտրական գործընթացների վերաբերյալ առանձնահատկությունները նախատեսված են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կուսակցության պետական գրանցումը կատարում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ Արդարադատության նախարարությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ալբանիայի Դուրես քաղաքում ընթացող երիտասարդների աշխարհի առաջնության 73 կգ քաշային կարգում Հայաստանի ներկայացուցիչ Նարեկ Մկրտչյանը պոկեց 123 կգ, իսկ հրում վարժությունում հայ մարզիկը գլխավերեւում պահեց 158 կգ եւ դարձավ փոքր բրոնզե մեդալակիր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Ծիրակ	+ 2 + 6 +12 + 16
	Կոտայքի լեռներ	+2 + 5 +12 + 15
	Կոտայքի նախալեռներ	+ 5 + 7 +16 + 19
	Գեղարքունիք	0 + 5 +12 + 15
	Լոռի	+ 4 + 8 +17 + 21
	Տավուշ	+ 7 + 11 +20 + 24
	Արագածոտնի լեռներ	+ 1 + 4 +12 + 14
	Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 8 +17 + 20

	Արարատ	+7 + 10 +21 + 24
	Արմավիր	+ 7 + 10 +21 + 23
	Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +11 + 15
	Վայոց ձորի նախալեռներ	+ 7 + 11 +17 + 20
	Սյունիքի հովիտներ	+ 9 + 14 +21 + 26
	Սյունիքի նախալեռներ	+ 5 + 8 +15 + 20
	Արցախ	+ 8 + 12 +22+ 26
	Երեւան	+ 7 + 9 +20 + 21

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.03.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*